

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ/ԼԻԶԻՆԳԻ/ ՊԱՅՄԱՆՆԵՐ¹

#	Պայմաններ	
1.	Լիզինգի առարկայի նկատմամբ ներկայացվող պահանջներ	Լիզինգի առարկան կարող է ձեռք բերվել ինչպես ՀՀ-ից, այնպես էլ արտերկրից՝ թե առաջնային, և թե երկրորդային շուկաներից
2.	Լիզինգառուի նկատմամբ ներկայացվող պահանջներ	Ընկերությունը պետք է լինի գործող <ul style="list-style-type: none"> վերջին 6 ամսվա ընթացքում, եթե Ընկերությունը գործունեություն է ծավալում առևտրի և /կամ սպասարկման և /կամ ծառայությունների ոլորտներում վերջին 12 ամսվա ընթացքում, եթե Ընկերությունը գործունեություն է ծավալում արտադրության ոլորտում
3.	Ժամանակացույցով սահմանված ժամկետից շուտ մայր գումարի վճարում ²	Վաղաժամկետ մարված Մայր գումարի նկատմամբ հաշվարկվում է միանվագ 0.5%, եթե վաղաժամկետ մարումը կատարվել է Լիզինգի տրամադրումից հետո առաջին 6/վեց/ ամսվա ընթացքում:
4.	Տույժ՝ Լիզինգի մայր գումարի և/կամ Տոկոսադրույքի մարման պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար	Ժամկետանց Լիզինգի և/կամ ժամկետանց Տոկոսագումարի 0,13 չափով կետանցի /պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների խախտման/ յուրաքանչյուր օրվա համար:
5.	Լիզինգի մարումները	ամսական, եռամսյակային, պայմանագրային
6.	Լիզինգի տրամադրման վճար	Լիզինգի գումարից միանվագ 0,5-1%, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ
7.	Կանխավճար	Նվազագույնը՝ 15%
8.	Կանխավճար/Լիզինգի գումար հարաբերակցությունը ³	15/85%

9.	Ապահովություն	<ul style="list-style-type: none"> • Լիզինգառուի տնօրենի և/կամ հիմնադրի և/կամ այլ անձի/ երաշխավորություն, • Գույքի/իրավունքի գրավ՝ ըստ պահանջի
10.	Լիզինգի ժամկետ շարժական գույք ձեռք բերելու նպատակով ⁴	6 ամսից մինչև 5 տարի
11.	Լիզինգի ժամկետ անշարժ գույք ձեռք բերելու նպատակով ⁴	1 –ից մինչև 10 տարի
12.	Արտոնյալ ժամկետ ⁴	Պայմանագրային
13.	Լիզինգի տոկոսադրույքը ⁴	ՀՀ դրամ՝ սկսած 11%-ից ԱՄՆ դոլար՝ սկսած 8%-ից Եվրո՝ սկսած 6%-ից
14.	Ապահովագրություն	Պարտադիր՝ Լիզինգի ողջ ժամկետի ընթացքում, ժամկետի առաջին տարին՝ Լիզինգի առարկայի ողջ արժեքի չափով, հաջորդ տարիներին՝ Լիզինգի մայր գումարի մնացորդից ոչ պակաս չափով
15.	Լիզինգի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճար ⁵	500,000 ՀՀ դրամ

¹ Սույն պայմանները կիրառելի չեն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի շրջանակում տրամադրվող լիզինգի դեպքում:

² Տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում Տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:

³ Անշարժ գույքի ձեռք բերման համար լիզինգի տրամադրման դեպքում, եթե գույքը ձեռք է բերվում Բանկի հետ համագործակցող կառուցապատող ընկերությունից, ապա Բանկը ֆինանսավորում է անշարժ գույքի ձեռք բերման արժեքի առավելագույնը 85 %-ը, մնացած դեպքերում՝ Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերության կողմից գնահատված իրացվելի/լիկվիդային և անշարժ գույքի ձեռք բերման արժեքներից նվազագույնի առավելագույնը 85 %-ը:

⁴ Լիզինգի տոկոսադրույքը և ֆինանսավորման ժամկետը կախված են գործարքի ռիսկայնությունից, ձեռք բերվող գույքի տեսակից և բիզնեսի առանձնահատկություններից. Լիզինգի տոկոսադրույքը կախված է նաև ֆինանսավորման ժամկետից:

⁵ Լիզինգի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճարը ենթակա է վճարման հաճախորդի կողմից, վերջինիս նախաձեռնությամբ և ցանկությամբ ներկայացված վերանայման հայտի բավարարման դեպքում՝ Բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից այդ հայտի հիման վրա կատարված վերլուծության եզրակացության հիմքով: Ընդ որում, որպես կանոն, Լիզինգի պայմանների վերանայման այլ դեպքերում սույն սակագինը ենթակա է գանձման Մեծ վարկային կոմիտեի որոշմամբ: